



Ճ Հ Մ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
2014 թ. թիվ 22

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7՝ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ ՕՐ

Ընթացիկ տարվա հոկտեմբերի 7-ին աշխարհի արհմիությունները 7-րդ անգամ նշեցին Արժանապատիվ աշխատանքի համար գործողությունների օրը

Հայաստանի պետիմնարկների արհմիությունն այս տարի ևս միացավ աշխարհի բոլոր արհմիություններին՝ նախաձեռնելով Հոկտեմբերի 7-ը խորհրդանշող կարգախոսներով բազմամարդ երթի անցկացումը: Երթի ավելի քան 150 մասնակիցները պետիմնարկների ոլորտում աշխատողներն էին՝ Մասիսից, Գավառից, Արագածից, Աշտարակից, Թալինից, Արարատից, Եղեգնաձորից, Հայաստանի պատմության թանգարանից, ՀՀ կառավարության աշխատակազմի «Սպասարկում» ՊՈԱԿ-ից, Շենգավիթ, Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերից, «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունից, ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունից, ՀՀ պետական գույքի կառավարման վարչությունից, և ճյուղային արհմիության խորհրդի անդամներ:

Մասնակիցները Հանրապետության հրապարակից-Աբովյան-Մաշտոց-Արամի-Աբովյան փողոցները հատեցին հատեցին օրվան բնորոշ կարգախոսներնեով՝ «ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ը՝ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ», «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻՆ՝ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՎԱՐԶ», «ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԱՐԴՈՒՆ՝ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ, ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՎԱՐԶ», «ՈՒԺԵՂ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆ, ՈՒԺԵՂ ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ», «ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է, ԱՆԴԱՄԱԿՑԵ՝ Ք ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ»:

Երթը լուսաբանվել է զանգվածային լրատվության միջոցներով (հղումները տեղադրված են պետիմնարկների արհմիության ֆեյսբուքյան կայք-էջում):

Հայաստանի պետիմնարկների արհմիությունը շնորհակալ է բոլորին արհմիության շարժման զարգացմանն ուղղված քայլերին միանալու համար և լիահույս, որ ավանդույթ դարձած արհմիութենական լայնածավալ միջոցառումները հետայսու լինելու են առավել ընդգրկուն և անխուսափելիորեն բարձրացնելու են արհմիության վարկանիշը:

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴՎՈՒՄ Է ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՎ

Այս և նախորդ տարում կազմակերպած երիտասարդական սեմինարների արդյունքում ձևավորվել է Հայաստանի պետիմնարկների երիտասարդ արհմիութենականների թև, որը համախմբելու է ոլորտի երիտասարդներին և ամենատարբեր միջոցներով նպաստելու է արհմիության առաջխաղացմանը:

Առաջարկում ենք մեր արհմիության բոլոր ղեկավարներին տեղերում բացահայտել և արհմիության աշխատանքներում ներգրավել երիտասարդներին, ովքեր իրենց գաղափարներով ու գործողություններով կակտիվացնեն արհմիութենական առօրյան, առավել տեսանելի կդարձնեն արհմիության գործողությունները, կամրապնդեն արհմիության հիմքը: Համոզված եղեք, որ այսօրվա երիտասարդը ավելի քան երբևէ վճռական է, անվախ, իրավունքները պաշտպանելու կամքի մեծ ուժով լի:

**ԱՌԱՋԱՐԿ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ՝
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

Կիսելով անդամ կազմակերպություններում բազմաթիվ համայնքային ծառայողների դժգոհություններն իրենց աշխատավարձերի հաշվարկման շուրջ և օգտվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքով արհմիությանը վերապահված իրավունքից՝ ՃՀՄ նախագահության որոշման համաձայն, նախագահ Ա. Ասատրյանը գրությամբ դիմել է ՀՀ վարչապետ պրն. Հովիկ Աբրահամյանին՝ համայնքային ծառայողների աշխատավարձերի կարգավորման խնդրով, որում մասնավորապես նշվում է. «Համայնքային ծառայողների վարձատրության չափը ներկայում համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատվում է ավագանու որոշմամբ՝ հաշվի առնելով «Տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ծառայության մասին», «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքները. մասնավորապես՝

1. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածով կարգավորվում է համայնքի ղեկավարի աշխատավարձը, որը սահմանվում է Ազգային ժողովի պատգամավորի աշխատավարձի նկատմամբ որոշ տոկոսաչափով՝ կախված համայնքի բնակիչների թվից

2. «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 27-ով սահմանվում է, որ «Համապատասխան աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների միևնույն խմբի և ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողներն ունեն հավասար պաշտոնային դրույքաչափի իրավունք»

3. «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով սահմանվում է աշխատավարձի ստորին շեմը:

2014 թվականի հուլիսի 1-ից հանրապետությունում բարձրացվել են նվազագույն և ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների աշխատավարձերը, ինչի հետևանքով բարձրացվել են նաև համայնքների ղեկավարների և համայնքերում տեխնիկական սպասարկում իրականացնող, նվազագույն աշխատավարձ ստացող աշխատակիցների աշխատավարձերը: Մակայն համայնքային ծառայողների աշխատավարձերը համայնքների մի մասում մնացել են անփոփոխ: Մասնավորապես, կան դեպքեր, երբ տեխնիկական սպասարկում իրականացնողները և համայնքային ծառայության առաջատար ու գլխավոր պաշտոններ զբաղեցնողները վարձատրվում են հավասար չափով:

Գտնում ենք, որ վերոնշյալ խնդիրը օրենսդրական կարգավորման կարիք ունի:

Առաջարկում ենք օրենքով ամրագրել ՀՀ համայնքային ծառայողների աշխատավարձերի չափը՝ համայնքային ծառայության յուրաքանչյուր պաշտոնի համար սահմանելով համապատասխան գործակից նվազագույն աշխատավարձի նկատմամբ՝ հաշվի առնելով նաև համայնքային ծառայողի աշխատանքային ստաժը»:

ՆՊԱՍՏԵՆՔ «ՊՐՈՖՏՈՒՐ»-Ի ԿԱՅԱՑՄԱՆԸ

Հայաստանի պետհիմնարկների արհմիության «Պրոֆտուր» ընկերությունը հանդիսանում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում հաշվառված «Քվանտ» օպերատորի գործակալ և այսուհետ սոցիալաթեթի բոլոր շահառուներին առաջարկում է սոցիալաթեթով հանգիստ Հայաստանի և Արցախի ավելի քան 40 ուղղություններով՝ ամենատարբեր հյուրանոցներում ու առողջարաններում:

Առաջարկում ենք նաև գալիք ամսանորյա տոների թոհուբոհից ազատվելու լավագույն տարբերակներ՝ տոնական միջոցառումներով հազեցած ամսանորյա փաթեթներ Հայաստանի և արտերկրի լավագույն հյուրանոցներում ամենատարբեր գնային առաջարկներով:

Չմոռանանք նաև, որ պետհիմնարկների արհմիությունը շարունակում է արհմիութենական կոլեկտիվներին զեղչեր տրամադրել «Պրոֆտուրի» միջոցով կոլեկտիվներով հանգստանալու դեպքում:

«Պրոֆտուրի» զարգացումը ամրապնդում է արհմիության ֆինանսական հենքը:

ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐԶ

✓ Պետհիմնարկների արհմիության նախաձեռնած երիտասարդական սեմինարների շարքի առաջին փուլի ավարտից հետո «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ հոկտեմբեր ամսին անցկացվեց «Արհմիության անդամակցության շարժառիթները» բովանդակությամբ սեմինարի 2-րդ փուլ. մասնակիցներն ընտրված էին նախորդ երեք սեմինարների մոտ 80 մասնակիցներից: Երիտասարդ արհմիութենականներն առավել խորը տեղեկացան արհմիության գործառույթներին, դերային խաղերով կիսեցին գործատուի ու արհմիության ղեկավարի գործառույթները, լուծեցին արհմիության խնդիրները, պարզեցին արհմիության իրավունքները, հնչեցրին արհմիությանն օժանդակելու բազմազան կարծիքներ և այլն:

Եռօրյա սեմինարն անցկացրին Ռ. Օհանջանյանն ու Ա. Ասատրյանը:

✓ 2014թ. հոկտեմբերի 1-ին ՀԱՄԿ-ում տեղի ունեցավ քննարկում «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀԱՄԿ-ի անդամ ճյուղային հանրապետական միությունների և ՀԱՄԿ-ի աշխատակազմի բաժինների կողմից ներկայացված առաջարկությունների շուրջ:

Քննարկմանը մասնակցում էին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի բաժնի պետ Վարազդատ Դանիելյանը, ՀԱՄԿ-ի անդամ ՃՀՄ-ների և ՀԱՄԿ-ի աշխատակազմի ներկայացուցիչները: Բացման խոսքով հանդես եկավ ՀԱՄԿ-ի նախագահ Է.Թումայանը, որից հետո Վ.Դանիելյանն անդրադարձավ ՀԱՄԿ-ի ներկայացրած առաջարկություններին՝ նշելով, որ դրանք առայժմ գտնվում են քննարկման փուլում:

✓ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան զանգվածային լրատվության միջոցներով իր տեսակետն է արտահայտել «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքի վերջին նախագծի շուրջ: ՀԱՄԿ-ի իրավաբանական բաժնի պետ Մ. Փիլիպոսյանը հրապարակավ հայտարարել է, որ օրենքը հակասում է ՀՀ Սահմանադրությանն ու Աշխատանքային օրենսգրքին, քանի որ օրենսգրքով դա ոչ թե ուղղակի անաշխատունակության նպաստ է անվանվում, այլ հղիության և ծննդաբերության նպաստ, և վստահ է, որ նման օրենքի կիրառումը խոչընդոտելու է ծնելիությանը: (Ավելի մանրամասն՝ hamk.am կայքում)

✓ ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության աշխատողների արհեստակցական կազմակերպությունն ընթացիկ տարվա հունիս ամսից ղեկավարում է նորընտիր նախագահ Դիանա Ավագյանը: Երիտասարդ նախագահին մաղթում ենք անխոչընդոտ ու արդյունավետ արհմիութենական աշխատանք:

ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆՆԵՐԸ՝ ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

Այս տարվա նոյեմբերի 23-ին ՃՀՄ համակարգի շախմատասեր արհմիութենականներն իրենց ուժերը չափեցին ճյուղային հանրապետական արհմիության՝ արդեն երկրորդ անգամ անցկացվող սպասված շախմատի առաջնությունում: Մրցող 7 թիմերը ներկայացնում էին չորսական մասնակիցներ ՃՀՄ անդամ կազմակերպություններից՝ Շենգավիթ և Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի, «ՀՀ Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, Խարբերդի մասնագիտացված մանկատան:

Հավասար միավորներով եզրափակիչը հատեցին երկու թիմ՝ Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի և Երևանի քաղաքապետարանի արհեստակցական կազմակերպությունների թիմերը: Լրացուցիչ ցուցանիշներով հաղթողի գավաթին արժանացավ Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի թիմը, երկրորդ և երրորդ տեղերն զբաղեցրին համապատասխանաբար Երևանի քաղաքապետարանի և անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիմերը:

Միաժամանակ, անհատական լավագույն ցուցանիշներ գրանցեցին Մարգիս Մելքոնյանը՝ Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմից, Հարություն Մելքունյանը՝ Երևանի քաղաքապետարանից և Ներսես Մանուչարյանը՝ դարձյալ Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմից՝ համապատասխանաբար արժանանալով ոսկե, արծաթե և բրոնզե մեդալների: Մասնակից բոլոր թիմերը խրախուսվեցին դիպլոմներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՅԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՐՇՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴԱՄ Է ԱՇԽԱՐՀԻ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԱՐՇՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ

Աշխարհի ավելի քան 20 մլն աշխատողներ, որոնք ներկայացնում են պետական կառավարման, ինքնակառավարման, հասարակական սպասարկման, սոցիալական, առողջապահական, կոմունալ ոլորտները, միավորված են Հասարակական սպասարկման ինտերնացիոնալում (PSI): Աշխարհի 154 երկրում 669 արհմիութենական կազմակերպություն ընդգրկող Ինտերնացիոնալը արհմիութենական համընդհանուր դաշնություն է, որի գործունեությունն ուղղված է աշխարհի բոլոր ծայրերում որակյալ հասարակական ծառայությունների մատուցմանը:

Նշենք, որ Ինտերնացիոնալի գործունեության ուսումնասիրության և հարակից այլ արհմիությունների հետ փորձի փոխանակման արդյունքում ՃՀՄ նախագահությունը որոշել էր դիմել կառույցի Եվրոպական տարածքային միավորմանը՝ անդամակցության համար: Դիմումի ընթացքը երկար չսպասեցրեց. Ինտերնացիոնալի որոշմամբ Հայաստանի պետիմնարկների արհմիությունը ևս միացավ աշխարհի խոշորագույն արհմիութենական կառույցին՝ որպես լիիրավ անդամ:

Շնորհավորում ենք մեր բոլոր արհմիութենականներին և լիահույս ենք արհմիութենական շարժմանը նպաստող և արդյունավետ համագործակցության:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՑՈՒԴԱՐԸ

❖ ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում տեղի է ունեցել բուժաշխատողների միտինգ, որն ամենախոշորն է վերջին տարիներին առողջապահության ոլորտում կազմակերպված բողոքի ակցիաներից: Շուրջ 6600 բուժաշխատողներ իրենց բողոքի ձայնն են բարձրացրել հիվանդանոցների լուծարման, բուժաշխատողների, նրանց աշխատավարձերի կրճատման դեմ և պահանջել այն պաշտոնյաների հրաժարականը, որոնք կողմնակից են առողջապահության ոլորտի արդիականացմանը: Մասնակիցները համոզված են, որ նշված բարեփոխումներն ուղղված են ոչ թե բժշկական օգնության որակին և մատչելիությանը, այլ առողջապահության ծախսերը 22,9%-ով կրճատելուն: Այդ ընթացքում մայրաքաղաքում փակվել են տասնյակ բուժհաստատություններ, դադարեցվել է մի շարք հիվանդանոցների գործունեությունը, իսկ աշխատակիցները տեղեկացվել են հետագա կրճատումների մասին:

❖ Վերջերս ՌԴ պետդումայի կողմից ընդունված օրենքը պաշտպանում է արհմիության ակտիվին անհիմն ազատումներից: Նշված օրենքով երիշխիքներ են սահմանվում արհմիության ղեկավար մարմիններում ընտրված աշխատողների համար: Այսուհետ գործատուն չի կարող այդ աշխատողներին աշխատանքից ազատել առանց արհմիության բարձրագույն մարմնի կարծիքի և աշխատանքի պետական տեսչության համաձայնության: Խոսքը արհմիութենական սկզբնական կազմակերպությունների նախագահների և տեղակալների մասին է, ովքեր ունեն հիմնական աշխատատեղ: Նշված աշխատողին աշխատանքից ազատելու հիմքը քննարկվում է արհմիության ղեկավար մարմնում, իսկ անհամաձայնության դեպքում լրացուցիչ երկկողմանի ուսումնասիրություններ են կատարվում, կրկին անհամաձայնության դեպքում վերջնական որոշումը կայացնում է գործատուն և հրամանի նախագիծը ուղարկում աշխատանքի տեսչություն: Աշխատողն էլ իր հերթին կարող է բողոքարկել աշխատանքի տեսչությունում: Տեսչության կողմից ազատումը անօրինական համարվելու դեպքում գործատուն պարտավորվում է աշխատողին վերականգնել աշխատանքի և վճարել պարապուրդի համար:

Աշխատանքի տեսչության որոշումը դատարանում կարող են վիճարկել և աշխատողը, և գործատուն:

Բացի վերը բերվածից, ՌԴ-ի պետդուման ընդունել է աշխատողների և արհմիության շահերից բխող ևս 14 օրենք:

❖ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշում է կայացրել, որ ֆրանսիական զինված ուժերում արհմիություն ստեղծելու և անդամակցելու արգելքը խախտում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածը, որով սահմանվում է հավաքների և միավորումների ազատության իրավունքը: